

Արսեն Է. Հարությունյան

Պատմ. գիտ. թեկնածու

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԵՐԵՎԱՆԸ ՎԻՄԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ*

Բանալի բառեր – միջնադարյան Երևան, վիմական սկզբնաղբյուրներ, գյուղաքաղաք, այգի, այգեգործություն, վանք, եկեղեցի, նվիրատվություն, պատարագ:

Մուտք

Երևանի պատմության համակողմանի ուսումնասիրման համար, հայ մատենագրության ավանդած տեղեկություններից գատ, առաջնային սկզբնաղբյուրներ են նաև մեզ հասած վիմական արձանագրությունները: Իբրև այդպիսին նախ հատկանշելի են **Էրեբունի (Արին-բերդ)** ամրոցում 1950 թ. և հետագա տարիների հնագիտական պեղումների ընթացքում հայտնաբերված չորս սեպագրերը: Դրանցից մեկը (նկ. 1) գտնվել է հենց 1950 թ. սեպտեմբերի 25-ին¹ արշավախմբի ղեկավար, ճարտարապետ **Կոնստանդին Հովհաննիսյանի** կողմից և բովանդակում է հետևյալը. «Խալդյան մեծությամբ, / Մենուայի որդի Արգիշտին / այս հոյակապ բերդը կառուցեց, / կոչեց քաղաք Իրբունի անվամբ՝ / ի փառս Բիայնա երկրների / և ի սարսափ թշնամի երկրների: / Արգիշտին ասում է՝ հողն / ամայի էր, ես այստեղ / հիշարժան գործեր կատարեցի: / Խալդյան մեծությամբ, / Մենուայի որդի Արգիշտին՝ թագավոր հրաշագործ, թագավոր Բիայնայի, / տերը Տուշպա քաղաքի»²:

* Հղվածն ընդունվել է տպագրության 15.04.2020:

1 Մյուս երեք սեպագրերը հայտնաբերվել են 1956, 1958 և 1968 թթ. հնագիտական պեղումների ժամանակ: Բոլորն էլ ընդհանուր առմամբ լավ են պահպանվել, բաղկացած են 10-13 տողից: Դրանցից մեկը ցուցադրվում է Երևանի պատմության, մյուս երեքը՝ «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանում: Բնագրերը գրեթե նույնաբովանդակ են, այսինքն՝ վերաբերում են Մենուայի որդի Արգիշտի թագավորի կողմից Իրբունի (Էրեբունի) բերդաքաղաքի կառուցմանը (մանրամասն տես **Արություն Н.**, Корпус урартских клинообразных надписей, Ер., 2001, էջ 212-214, N 198-199, 201):

2 **Оганесян К.**, Арин-берд (Ганли-тапа) - урартская крепость города Ирпуни, «Տեղեկագիր» հաս. գիտ., Եր., 1951, N 8, էջ 76, տես նաև **Իսրայելյան Ս.**, Ուրարտական երկու նոր արձանագրություն, «Տեղեկագիր» հաս. գիտ., Եր., 1951, N 8, էջ 94, **Արություն Н.**, նշվ. աշխ., էջ 212, N 197:

Սեպագիրն իրավամբ համարվում է Երևանի ծննդյան քարե «անձնագիրը», և, չնայած նրան, որ բնագրում քաջածանոթ Ք. ա. 782 թվականն ուղղակիորեն վկայված չէ, այդուհանդերձ, Վանից հայտնի Արգիշտի Ա-ի (Ք. ա. 786-764) Խորխորյան տարեգրության համաձայն, ընդունված է բերդաքաղաքի հիմնադրումը վերագրել **Արգիշտի Ա-ի** գահակալման 5-րդ տարվան, որը համապատասխանում է Ք. ա. 782 թվականին³:

Այնուհետ էրեբունի բերդաքաղաքի ժառանգորդ Երևանի պատմության վերաբերյալ վիճաբան աղբյուրները տևական ժամանակ կարծես թե լռում են, թեպետ ենթադրելի է, որ Երվանդունիների, Արտաշիսյանների ու Արշակունիների օրոք մայրաքաղաքներ հռչակված Արմավիրի, Երվանդաշատի, Արտաշատի ու Վաղարշապատի բարերար ազդեցությունը պիտի կրեր նաև դրանցից ոչ հեռու գտնվող ապագա մայրաքաղաքը⁴:

Միջնադարյան մեսրոպատառ վիճագրերում Երևանի մասին առաջին հիշատակությունները 9-րդ դարից են: Այս և հետագա՝ մինչև 13-14-րդ դդ. վիճագրերում վկայված Երևանը ներկայանում է իբրև այգեվետ բնակավայր, որտեղից հիմնականում այգիներ են գնվել ու նվիրաբերվել տարբեր վանքերի ու եկեղեցիների⁵:

Այգեգործությունը միջնադարյան Հայաստանի երկրագործական մշակույթի զարգացած ձյուղերից էր, որն աղբյուրներում վկայված է դեռևս վաղ միջնադարից: Ազգագրագետ **Վարդ Բդոյանի** բնորոշմամբ՝ վավերագրերում ընդհանրացված ձևով հիշատակվող այգին այն հողատարածքն էր, որտեղ խաղողի վազ կամ պտղատու ծառեր էին տնկվում, իսկ խաղողի և պտղատու այգիների մշակությամբ զբաղվել են ողջ Արարատյան դաշտում, այդ թվում՝ Երևանում⁶: Այստեղից՝ հետևություն, որ այգեգործությունը բնորոշ էր ոչ միայն գյուղական, այլև գյուղաքաղաքային ու քաղաքային բնակավայրերին, որտեղ այգիները տնկվում էին ինչպես ավատներեի ու վանական միաբանությունների համար, այնպես էլ դրանք հասանելի էին ուխտավորներին ու շարքային քաղաքացիներին⁷: Ուստի առնվազն 11-12-րդ դդ. արդեն իբրև քաղաք ձևավորված Երևանը

3 Սեպագրի ստույգ ժամանակը որոշելու հարցը վեճի առարկա էր դարձել ուրարտագետների համար: Ն. Հարությունյանը, Խորխորյան տարեգրության տվյալները նկատառելով, էրեբունի-Երևանի հիմնադրումը վերագրում է Արգիշտի Ա-ի գահակալման 5-րդ տարվան, այսինքն՝ ասուրա-ուրարտական ռազմական առաջին ընդհարմանը (Ք. ա. 781 թ.) նախորդող Ք. ա. 782 թվականին (տես **Հարությունյան Ն.**, Երևանի հիմնադրման հարցի շուրջ, «Պատմաբանասիրական հանդես», Եր., 1959, N 2-3, էջ 87), ինչը որոշակի վերապահությամբ ընդունել է նաև Գ. Մելիքիշվիլին (տես **Меликшвили Г.**, Древневосточные материалы по истории Закавказья, I, Нагри-Урарту, Тбилиси, 1954, էջ 217, 258-259):
4 Տես **Վարդանյան Ա.**, Հայաստանի մայրաքաղաքները, Եր., 1995, էջ 192-193:
5 Վիճագրերում հաճախադեպ են այգիների և հողերի նվիրաբերման մասին վկայությունները, ինչպիսիք պահպանվել են հատկապես խոշոր վանական համալիրների Հաղպատի, Սանահինի, Բագնայրի, Կեչաշիսի, Հառիճի, Նորավանքի, Տաթևի և մյուս հոգևոր կենտրոնների նվիրատվական վիճագրերում:
6 Տես **Բդոյան Վ.**, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Եր., 1972, էջ 123, 129: Արարատյան դաշտում զբաղվել են նաև բամբակագործությամբ, ինչի մասին է վկայում Ս. Հռիփսիմե վանքի 1296 թվակիր վիճագիրը, ըստ որի՝ տեղի իշխանավորները վերացնում են վանքից, ինչպես նաև շահնայի (հարկահավաք պաշտոնյա) օգտին գանձվող բամբակի շարիատը (տասանորդը) և լրացուցիչ հարկը (տես **Հարությունյան Ա.**, Վաղարշապատ. վանքերը և վիճական արձանագրությունները, Ս. Էջմիածին, 2016, էջ 267-268, արձ. 528):
7 Տես **Բեգլարյան Հ.**, Այգեգործությունը միջնադարյան Հայաստանում, «Լրաբեր» հաս. գիտ., Եր., 1989, N 11, էջ 72, 79:

ևս այգեգործության նշանավոր կենտրոն էր, ինչպես Անին, Դվինը, Բջին, Գառնին, Թալինը, Եղեգիսը և Հայաստանի մյուս խոշոր բնակավայրերը:

Երևանի պատմության ուսումնասիրման համատեքստում նախորդ հետազոտողները (**Ե. Շահագիզ, Ն. Ակինյան, Թ. Հակոբյան** և այլք) տարբեր առիթներով անդրադարձել են նաև այդօրինակ վիմագիր աղբյուրներին, սակայն ընդհանուր վերլուծական և համապարփակ ուսումնասիրություն երբևէ չի իրականացվել: **Այս տեսանկյունից մեր նախաձեռնությունն առաջինն է**, որով փորձել ենք ամբողջացնել միջնադարյան Երևանի վիմագիր հիշատակությունների ուշագրավ էջերը⁸: Հաշվի առնելով այն, որ ներկայացվող վիմագրերը հիմնականում հրատարակված են, ստորև վկայակոչում ենք դրանց՝ միայն մեր խնդրին առնչվող հատվածները⁹ սկսելով մեզ հայտնի վաղագույն հիշատակությունից, որը Սևանավանքի 874 թ. արձանագրությունն է:

Ա. ՍԵՎԱՆԱՎԱՆՔ

Սևանավանքի Ս. Առաքելոց եկեղեցու թմբուկի հյուսիսային նիստին պահպանված վիմագիրը 1926 թ. ընդօրինակվել և 1938 թ. ռուսերենով հրատարակվել է կովկասագետ **Լևոն Մելիքսեթ-Քեկի** ընթերցմամբ: Հնգատող վիմագիրն առաջին հայացքից աչքի է ընկնում անվարժ գրչությամբ, միևնույն ժամանակ՝ առատ կցագրերով (գրչանկ. 1, նկ. 2): Այն կազմվել է Աշոտ Ա Բագրատունու (884/5-890) դուստր և Սյունյաց Վասակ Գաբուռ իշխանի կին **Մարիամ իշխանուհու** (տիկնոջ) անունից, որը կառուցել է Սևանավանքի Ս. Առաքելոց և Ս. Աստվածածին եկեղեցիները, ինչի առթիվ վիմագրում թագավոր հիշվող (պաշտոնապես դեռ թագավոր չէր) Աշոտ Բագրատունու օժանդակությամբ «վախմ» են արել, այսինքն՝ վանքին իբրև անձեռնմխելի գույք են տվել գյուղեր ու հանդամասեր (Վարսեր, Գոմաձոր, Ցամաքբերդ, Բերդ, Ուռեացտափ), ինչպես նաև այգիներ Գառնիում և Երևանում. «...եւ տվաք վախմ Սք. Առաքելոցս.... այգի (ի) Գառնի եւ յԵրեւան....»¹⁰:

8 Այս թեմայով անցյալ տարի գեկուցում ենք ներկայացրել Գյումրիում կայացած՝ Շիրակի պատմամշակութային ժառանգությանը նվիրված 10-րդ միջազգային գիտաժողովին (տես **Հարությունյան Ա.**, Միջնադարյան Երևանը վիմական արձանագրություններում, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. Հայագիտության արդի հիմնահարցեր» 10-րդ միջազգային գիտաժողովի նյութեր, Գյումրի, 27-29 սեպտեմբերի 2019, էջ 41-43):

9 Ընթերցողին առավել հասանելի դարձնելու նպատակով հատվածաբար ենք ներկայացրել նաև ընդարձակ վիմագրերի լուսանկարներն ու ուղղանկյուն շրջանակում ընդգրկել վիմագրի՝ Երևանին առնչվող հատվածը, իսկ Սևանավանքի դժվարընթեռնելի վիմագրին կցել ենք նաև գրչանկարը:

10 **Меликсет-Бекон Л.**, Новооткрытая надпись на Севане от 874 г., «Памяти академика Н. Я. Марра», М.-Л., 1938, с. 413, տես նաև **Մուսի** Երևանի հիշատակությունը Սևանի 874 թ. արձանագրության մեջ, ՍՍՍՐ ՊԱ «Տեղեկագիր», 1940, N 4-5, էջ 117-118 (վերատպված՝ **Մելիքսեթ-Քեկի Լ.**, Պատմաբանասիրական պրպտումներ, աշխատասիրությամբ **Պ. Մուրադյանի**, Ս. Էջմիածին, 2010, էջ 373-375), հմմտ. **Հակոբյան Թ.**, Երևանի պատմությունը. հնագույն ժամանակներից մինչև 1500 թ., Եր., 1969, էջ 200, **Ղափաղայան Կ.**, Հայերեն գրի սկզբնական տեսակները, «Էջեր հայոց միջնադարյան մշակույթի և պատմության», Գիտական ժառանգություն, հատ. 5, Եր., 2007, էջ 165, արձ. 2:

ԿՆ ԱՅՅՄԱՍ	ՍԻՆԱԿԱՆՈՒԽՈՒ 874 թ.	ԱՅԱՆԵՄ	ԱՊՐԷՆԻՍԱՆԱՅԱԻՐԳ
ԱՆՈՍԻ ԿՐԱՔ ՅՄԱԿՐՆԸ ԿԻ ՁԱՏԸ ԿՐԱՆՆԱՍ ԻՆԷ ՅԺԸՆԸՎԼ	ՎԱԿԱՆԱՐԱԿԱՆ ԵՁ ԱԿԿԻՆԱ ՅԳԻԳԱՐԻՆԻ ՍԱ ԱՍՈՒՄ ԳՐԹԸԿ ԴՅԻ ԹՎՅԻԳ	ՎՃՏԵՐ	ՅԳՈՎՁՐ ՅԱՅԳԻԵԳՐՈՒ ՅՐԵՆԻԹԳՄԵՆԵՍԿ ԵԿՐԱՍԵՂՈՒԿԱՆ

Գրչանկ. 1. Մարիամ իշխանուհու 874 թ. արձանագրությունը Սևանավանքում (գրչանկարը՝ Գագիկ Սարգսյանի)

Արձանագրությունը շինարարական-նվիրատվական բնույթ ունի, և հետաքրքիրն այն է, որ, ի տարբերություն նմանօրինակ այլ վիճակագրերի, կատարված շինարարության և նվիրատվության դիմաց պատարագ չի սահմանվել, բայց ավարտվում է նվիրատվությունները խափանողներին ուղղված նզովքի, իսկ պահպանողներին՝ օրինանքի հայտնի բանաձևերով: Վիճագրում մեզ հետաքրքրողը վանքին, ի թիվս այլ նվիրատվությունների, նաև Երևանից այգի հատկացնելն է, ինչի առնչությամբ տեղին է նկատել առաջին հրատարակիչ Լ. Մելիքսեթ-Քեկը, երբ նշում է, թե այս վիճագրի շնորհիվ կասկածից վեր է այն, որ դեռևս 9-րդ դարում Երևանն արդեն այգեվետ բնակավայր էր¹¹:

Արձանագրության բովանդակությունը չնչին փոփոխությամբ, այն է՝ Մարիամ իշխանուհու միջոցներով ապագա կաթողիկոս Մաշտոց Ա Եղիվարդեցին (897-898) 874 թ. կառուցել է Սևանավանքի Ս. Առաքելոց և Ս. Աստվածածին եկեղեցիները, վկայակոչել է նաև Սյունյաց պատմագիր **Ստեփանոս Օրբելյանը**, որն ակնհայտորեն օգտվել է բնագրից և, ըստ էության, վիճագրի առաջին ընդօրինակողն է¹²: Այլ է 18-րդ դարում «Սևանու անապատի որպիսությունքն» խորագրի ներքո **Սիմեոն Ա Երևանցի** (1763-1780) կաթողիկոսի նկարագրությունը, որում վանքի սեփականությունը համարվող վիճակների կազմում Գառնիի և Երևանի այգիների մասին որևէ տեղեկություն չկա¹³: Այս հանգամանքը Լ. Մելիքսեթ-Քեկը բացատրում է նվիրատվությունների նկատմամբ վանքի իրավունքների հետագա խախտմամբ¹⁴:

Բ. ՄԱՔԵՆՅԱՑ ՎԱՆՔ

Դեռևս վաղ միջնադարում հիմնադրված Մաքենիս գյուղի համանուն վանքի գլխավոր Ս. Աստվածածին գմբեթավոր եկեղեցին 9-րդ դարում հիմ-

11 Տե՛ս Մելիքսեթ-Քեկ Լ., նշվ. աշխ., էջ 373:
 12 Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Պատմություն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 174:
 13 Տե՛ս Սիմեոն կաթողիկոս Երևանցի, Ջամբռ, Վաղարշապատ, 1873, էջ 284:
 14 Տե՛ս Մելիքսեթ-Քեկ Լ., նշվ. աշխ., էջ 375:

նանորոգել է Սյունյաց **Գրիգոր Բ Սուփան** իշխանը (859-912)՝ Վասակ Սյունու և Մարիամ իշխանուհու որդին: Նրա անունից կազմված ընդարձակ արձանագրությունը, որը նախապես եղել է եկեղեցու արևելյան պատին, հատվածաբար պահպանվել է տարբեր շինաքարերի վրա, որոնք հետագա նորոգումների ժամանակ պատահականորեն օգտագործվել են հիմնականում կառույցի արևելյան ու արևմտյան պատերի շարվածքում (նկ. 3): Վիմագրագետ **Սեդրակ Բարխուդարյանը** հայ վիմագրության «Դիվան»-ը կազմելիս օգտվել է պատմագիր Ստեփանոս Օրբելյանի ընդօրինակումից, որն այս արձանագրության վերծանության միակ վստահելի աղբյուրն է: Վերջինիս մի հիշատակությունից պարզվում է, որ միջնադարում ևս արձանագրությունը խախտված է եղել, քանի որ «...վասն հնութեանն և խախտելոյ քարանցն ոչ կարացաք զբովանդակն իմանալ, այլ բազում բանք և տուրք իշխանացն պակասին»¹⁵: Պատմագիրը փորձել է հստակեցնել նաև արձանագրության ժամանակը. «...այս ամենայն գործեալ եղև յ300 թուականէն (851) մինչեւ յ350-ն (901)»¹⁶, այսինքն՝ արձանագրությունը թվագրում է 9-րդ դարի երկրորդ կեսով:

Ինչ վերաբերում է վիմագրի բովանդակությանը, ապա այն աղերսներ ունի Սևանավանքի վերոհիշյալ վիմագրի հետ, միայն թե այս դեպքում եկեղեցին հիմնանորոգվել և կրկին բազմաթիվ նվերներ ու կալվածքներ է ստացել, որոնց թվում՝ հինգ կուղպակ (կրպակ, խանութ) Անիում, նույնքան այգի Երևանում, հինգ հարյուր առու այգի (թերևս մարգ, ջրովի այգի) Գառնիում, երկու այգի Եղեգիսում. «...եւ ետու :Ե: (5) կուղպակս՝ յԱնի եւ :Ե: (5) այգի՝ յԵրեւան եւ :Շ: (500) առու այգի՝ ի գիւղաքաղաքն Գառնի, եւ :Բ: (2) այգի՝ յԵղեգիս...»¹⁷:

Անիի և գյուղաքաղաք Գառնիի կողքին Երևանի հիշատակությունն առնվազն 10-րդ դարասկզբին ինքնին ուշագրավ է, առավել ևս որ ժամանակի պատմագիր-կաթողիկոս **Հովհաննես Ե Դրասխանակերտցին** (898-929) դեռևս 7-րդ դարում տեղի ունեցած արաբական արշավանքները նկարագրելիս Երևանն իբրև քաղաքագյուղ է բնորոշել. «Յայնմ ժամանակի ասեն լինել գկռին, որ ի քաղաքագիւղ Երեւանի, զոր բաւական քեզ ուսուցանեն զայնր պատերազմի զհանգամանս...»¹⁸:

15 Ստեփանոս Օրբելյան, նշվ. աշխ., էջ 181:

16 Նույն տեղում:

17 Նույն տեղում, էջ 179-181, տե՛ս նաև «Դիվան հայ վիմագրության» (այսուհետ՝ ԴՀՎ), պրակ IV, Գեղարքունիք. Կամոյի, Մարտունու և Վարդենիսի շրջաններ, կազմեց **Բարխուդարյան Ս.**, Եր., 1973, էջ 290-291, արձ. 1209:

18 **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ** Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և առաջաբանը **Գ. Տէր-Վարդանանի**, «Մատենագիրք Հայոց», ԺԱ. հատոր, Ժ. դար, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 414:

Գ. ՀԱՌԻՃԱՎԱՆՔ

Հառիճավանքի վիճազրեքում Երևանը հիշատակված է երկիցս: Դրանցից մեկը վանքի ընդարձակ և բովանդակալից վիճագիրն է՝ պահպանված Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցու հյուսիսային պատին՝ արտաքուստ, բաղկացած 11 տողից: 1201 թվակիր արձանագրությունը բնույթով շինարարական-նվիրատվական է, որում վկայված է **Զաքարե ամիրսպասալարի** կողմից «Սուրբ Հառիճայ ուխտը» նախկին տերերից «գանձագին արարելու», այսինքն՝ գնելու և հանուն կենդանության վրաց Թամար թագուհու, Իվանե եղբոր, գավակների՝ Շահնշահի ու Ավագի և ծնողների Կաթողիկե եկեղեցին կառուցելու և բազում սպասքով ու սրբություններով հարստացնելու մասին պատմությունը: Զաքարեն վանքին իբրև սեփականություն է տալիս նաև իր հայրենատիրաց Մողոնիս գյուղը, ջրաղացներ Գետիկ գյուղում և Անիի Գլիձոր թաղամասում, պարտեզ Ծաղկոցաձորում (Անի) և, ի թիվս այլ նվիրատվությունների, մեկական այգի Երևանում ու Թալինում. «...այգի մի յերեւան եւ այգի մի ի Թալին, եւ զառաջին սահմանքն, որ բուն լեալ էր՝ հաստատեցի...»¹⁹ (նկ. 4): Վիճագիրն ուշագրավ աղբյուր է 13-րդ դարասկզբին՝ Զաքարյանների իշխանապետության ժամանակաշրջանում, Հայաստանում վանական կյանքը, եկեղեցաշինությունն ու վանքերի կալվածատիրությունը լուսաբանելու առումով:

Երկրորդ վիճագիրը գլխավոր Ս. Աստվածածին եկեղեցուն արևմուտքից կից քառասյուն կենտրոնակազմ հորինվածքով գավթի ներսում է (նկ. 5): Գավթի լայնությունը կառուցվել է 13-րդ դարում՝ **Հովհաննես վարդապետի** առաջնորդության օրոք, իշխան **Վահրամ Հեձուպի** միջոցներով: Շինության որմերին՝ ներսի կողմում, պահպանվել են մեկ տասնյակից ավելի վիճագրեր: Հյուսիսային պատի վեցտողանի վիճագրի համաձայն՝ ոմն Մխիթար իր միջոցներով գնել է Եվագրի որդու՝ Երևանում գտնվող այգին և նվիրաբերել Հառիճավանքին, որի դիմաց առաջնորդ տեր Հովհաննեսն ու միաբանները պարտավորվել են Ս. Խաչի գյուտի շաբաթ օրը երեք պատարագ մատուցել. «...ես՝ Մխիթար, գնեցի յերեւան զԵւագրին որդոյն այգին յարդեանց իմոց եւ ետու ի Հառիճայ...»²⁰:

Դ. ԿԵԶԱՌԻՍԻ ՎԱՆՔ

Տրամաբանական է, որ այգիներով շրջապատված Երևանը պետք է ապահովված լիներ նաև ջրով, ինչը Կեչառիսի վանքի հիմնադրման համատեքստում հաստատվում է **Մխիթար Արիվանեցու** հաղորդմամբ, ըստ ո-

19 ԴՀԿ, պրակ X, Շիրակի մարզ, կազմեց **Քարխուդարյան Ա.**, Եր., 2017, էջ 45, արձ. 50:
20 Նույն տեղում, էջ 53, արձ. 67:

րի՝ Գրիգոր-Ապիրատ Հասանյան Պահլավունի իշխանը 11-րդ դարասկզբին «շինեաց գԿեչառուս եւ եհան գառուն Երեւանայ»²¹: Ի դեպ, Կեչառիսի վանքի վիմագրերում ևս քանիցս հանդիպում են հիշատակություններ Երևանի այգիների նվիրատվության վերաբերյալ, որոնք վկայակոչում ենք ստորև:

Կեչառիսի վանքի Ս. Նշան եկեղեցու վիմագրերում երիցս, իսկ Կաթողիկե եկեղեցու հարավային պատի ընդարձակ վիմագրում երկիցս վկայված են Երևանից այգիներ գնելու ու նվիրաբերելու մասին հիշատակություններ: Վաղագույնը Ս. Նշան եկեղեցու հյուսիսային պատի հայոց ՌԾԳ, այսինքն՝ 1204 թ. արձանագրությունն է, ըստ որի՝ ուն **Վարդըմբել** գնել է Երևանում գտնվող Մեղիտոնի (Մելիտոն) այգու մեկ քառորդ մասն ու ընծայել վանքի գլխավոր Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն. «...ես՝ Վարդըմբել, որ գնեցի ի յԵրեւան գՄեղիտոնոյ էգոյն չարէքն եւ էտու ի Սբ. Գրիգորս...»²²: Այսպես կոչված «գործարքը» ավարտվել է վանքի սպասավորների կողմից նվիրատուի համար տարին երկու պատարագ սահմանելով (նկ. 6): Վիմագրում հետաքրքիրը նաև իբրև նվիրատու հիշատակված Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու փաստն է, երբ արձանագրությունը կազմվել է վանքի Ս. Նշան եկեղեցու որմին, բայց վկայված է կից գլխավոր եկեղեցու անունը:

Ժամանակագրորեն հաջորդը վանքի ծավալուն վիմագրերից մեկն է՝ փորագրված Կաթողիկե եկեղեցու հարավային պատի չորս շարք քարերին, բաղկացած 22 տողից (նկ. 7): 1214 թվակիր վիմագրի սկզբնամասը բավականաչափ վնասված է ընկած հին քարերի տեղում նորերն օգտագործելու հետևանքով: Հնարավոր վերծանությունից դատելով՝ **Վասակ Խաղբակյան** իշխանը կառուցել է եկեղեցին, այն ապահովել եկեղեցական սպասքով, խաչերով՝ նվիրաբերելով նաև գանձագին գյուղ և մեկական այգի Երևանում ու Նորաշենում. «...ետու եւ զգանձագին գեղն... այգի մի յԵրեւան եւ այգի մի ի Նորաշէնքն...»²³: Արձանագրությանն իբրև շարունակություն հաջորդում է Վասակի կին **Մամայի** անունից գրված մեկ այլ վիմագիր, որում դարձյալ հիշատակված է Երևանից այգի գնելու և եկեղեցուն նվիրաբերելու

21 Մխիթարայ Արիվանցոյ Պատմութիւն Հայոց, ի յոս ընծայեաց Ս. Էմին, Մոսկվա, 1860, էջ 58: Կեչառիսի վանքի հիմնադրման հարցի առնչությամբ Գրիգոր-Ապիրատ իշխանի գործունեությանն անդրադարձել է նաև վիմագրագետ Գագիկ Սարգսյանը (տես **Սարգսյան Գ.**, Գրիգոր-Ապիրատ Հասանյան. Հիմնադիր Կեչառիսի վանքի (վիմագրական նոր վկայություն), «Հին Հայաստանի մշակույթը», XII, հանրապետական գիտական նստաշրջան՝ նվիրված ակադ. Բաբկեն Առաքելյանի ծննդյան 90-ամյակին, Եր., 2002, էջ 108-109):

22 **Յովհաննէս եպ. Շահխաթունեանց**, Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ զաւառացն Արարտայ, աշխատասիրութեամբ **Ա. Տեր-Ստեփանյանի**, Ս. Էջմիածին, 2014, էջ 339, տես նաև **Գարեգին կթ. Յովսէփեան**, Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, Բ. հրատարակութիւն, Անթիլիաս-Լիբանան, 1969, էջ 313, արձ. Ա/40: Գ. Հովսէփյանը թվականը կարդացել է ՌԺԲ (1163) նշելով, որ նախորդ հրատարակիչները (Շահխաթունյանց, Ալիշան, Կոստանյանց, Մեսրոպ արք. Սմբատյանց, Լալայան) սխալ են վերծանել: Տեղում վիմագրի ուսումնասիրությունը պարզեց, որ զարմանալիորեն սխալ է Հովսէփյանը, քանի որ բավականին հստակ ընթերցնելի է ՌԾԳ (1204): Գ. Հովսէփյանի վերծանությանն է հետևել նաև վիմագրագետ Ս. Ավագյանը (տես **Ավագյան Ս.**, Վիմական արձանագրությունների բառաքնություն, Եր., 1978, էջ 306):

23 **Գարեգին կթ. Յովսէփեան**, նշվ. աշխ., էջ 299-300, արձ. Ա/4:

մասին. «Ես՝ Մամայա.... զայգին իմ, որ յերեւան, գնեցի ի հալլալ ընչից իմոց, ետու [զեկե]ղեցիս....»²⁴:

Ս. Նշան եկեղեցու՝ Երևանի հիշատակամար մյուս երկու վիմագրերն անթվակիր են, սակայն ժամանակամերձ են նախորդներին: Դրանցից մեկը փորագրված է անմիջապես մուտքի բարավորին և հաղորդում է Երևանի **Վարդ պատրոնի՝** հայրենի, այսինքն՝ սեփական Չմշիկ²⁵ կոչվող այգին Կեչառիսի վանքի վանահայր Պետրոսին ընծայելու մասին. «....ես՝ պատրոն Վարդ Երեւանո, էտու զիմ հայրէնի այգին, որ Չմշկա կոչի, ի հայր Պետրոս....»²⁶ (նկ. 8): Վերջինս այն նվիրաբերել է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն, որի դիմաց ութ պատարագ է սահմանվել. չորսը՝ Վարդին, չորսը՝ Անիարին՝ թերևս Վարդի կողակցին: Ոմն Վարդ երեց Երևանցի հիշատակված է նաև Հովհաննավանքի Կաթողիկե եկեղեցու հարավային պատի մի նվիրագրի վերջում, որին ուսումնասիրողներից Կ. Ղաֆադարյանը համարում է տվյալ նվիրատվության մասնակից, միջնորդ²⁷: Թերևս մեկ այլ՝ Ավագի որդի Վարդ երեց հիշվում է Գեղարդավանքի Ս. Աստվածածին եկեղեցու հյուսիսարևմտյան կրկնահարկ ավանդատան վերնահարկի մի վիմագրում՝ իբրև շինարարության մեկենաս²⁸:

Երևանից այգի նվիրաբերելու հիշատակամար հաջորդ վիմագիրը Ս. Նշան եկեղեցու նույն արևմտյան պատի վերնամասում է՝ լուսամտի աջ կողմում (նկ. 9): Ըստ վիմագրի՝ ոմն Մխիթարիչ Երևանի «ախբի», այսինքն՝ աղբած, պարարտացրած²⁹ այգին նվիրել է Կեչառիսի վանքին, որի դիմաց տեղ Գրիգորիսի, Գրիգոր վարդապետի և առաջնորդ տեղ Համազասպի հրամանով պատարագ է սահմանվել. «....ես՝ Մխիթարիչ, որդի Գրիգորի, ետու զիմ ախբին այգին յերեւանի ի Սբ. ուխտս Կեչառուս....»³⁰: **Գարեգին Հովսեփյանը** նկատում է, որ վիմագրում հիշատակված տեղ Գրիգորիսը, որը Բջնիի եպիսկոպոսն էր, և Գրիգոր վարդապետը, որը Լոռիի և Անիի ժողովների մասնակից նշանավոր Մոնտիկն է, հիշատակված են նաև վանքի Կաթողիկե եկեղեցու հարավային պատի ընդարձակ վիմագրում, որում ևս, ինչպես վերը նշեցինք, Երևանից այգի էր նվիրաբերվել: Արձանագրությունն ավարտվում է նվիրագրերին բնորոշ պատարագների հատկացմամբ. «....:Ե: (5) ինձ՝ Մխիթարչիս, :Գ: (3) Տիկնացտիկնս՝ Կոկորին մաւրն, :Դ: (4) Գրիգո-

24 Նույն տեղում, էջ 300, արձ. Ա./4:

25 Չմշիկ (Չմշկա) անունն ինքնին հուշում է, որ խաղողի այգի է նվիրաբերվել, քանի որ խաղողի մշակումը ենթադրում էր նաև չամիչի պատրաստումը, որի համար ճուրճ այնքան էին թողնում վագի վրա, մինչև չնշվելը, այսինքն՝ հյուսիք բաշվեր, ցամաքեր (տես «Հայոց լեզվի բարբառային բառարան», հատ. 4, Եր., 2007, էջ 418):

26 **Յովհաննես եպ. Շահխաթունեանց**, նշվ. աշխ., էջ 338, **Գարեգին կթ. Յովսեփյան**, նշվ. աշխ., էջ 314, արձ. Ա./41:

27 Տես **Ղաֆադարյան Կ.**, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Եր., 1948, էջ 95, արձ. 35:

28 Տես **Գարեգին կթ. Յովսեփյան**, նշվ. աշխ., էջ 320, արձ. Ա./75:

29 Այս մեկնաբանությունը Գարեգին Հովսեփյանինն է, որը հիշատակում է նաև Հավուց թառում երկու «աղբի» հողի վկայությամբ վիմագիրը (տես **Հովսեփյան Գ.**, Հավուց թառի Ամենավորկիչը և նույնանուն հուշարձաններ հայ արվեստի մեջ, «Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության», հատ. Բ., Եր., 1987, էջ 25, ծմբ. 63): Ս. Ավագյանը, հետևելով Գ. Հովսեփյանին, ավելացնում է նաև «բերրի հող» կամ «այգի» իմաստը (տես **Ավագյան Ս.**, նշվ. աշխ., էջ 23):

30 **Յովհաննես եպ. Շահխաթունեանց**, նշվ. աշխ., էջ 339, **Գարեգին կթ. Յովսեփյան**, նշվ. աշխ., էջ 314, արձ. Ա./45:

րոյ], :Գ: (3) Մամկայ]....»³¹: Գարեգին Հովսեփյանի համոզմամբ՝ նույն Տիկնացոսիկինը հիշատակված է նաև Հավուց թառի վանքի մի նվիրագրում. այստեղ է թաղված նաև նրա որդի Կոկորը (Կուկոր, մահացել է 1246 թ.)³²:

Ե. ՀԱՎՈՒՑ ԹԱՌԻ ՎԱՆՔ

Երևանին առնչվող հիշատակություններ են պահպանվել նաև Հավուց թառի վանքի վիմագրերում: Կառուցման տեղի անունից Բլրի կոչվող եկեղեցու արձանագրություններն ուշագրավ տեղեկություններ են հաղորդում ինչպես Երևանից «գանձագին» այգի նվիրելու, այնպես էլ ծագումով երևանցիների մեկենասությամբ իրականացված շինարարությունների մասին: Այսպես, եկեղեցու արևելյան պատի վերնամասում մասամբ պահպանված արձանագրության վերծանությունը պարզում է, որ **Սարգիս Նորագավիթցին**, նրա ամուսին Էրմանը և եղբայր Ամիրը, միաբանելով սուրբ ուխտին, նվիրաբերել են Երևանի «գանձագին հայրենիք», այսինքն՝ իրենց միջոցներով գնված և իրենց սեփականությունը դարձած այգին, որի դիմաց ստացել են երկուական պատարագ. «...միաբանեցաք սրբոցս եւ տվաք յԷրեւան զմեր գանձագին հայրենիք այգին....»³³ (նկ. 10 ա): Մեկ այլ վիմագրում կարդում ենք դարձյալ այգու նվիրաբերման մասին, իսկ նվիրատուն երևանցի Մենասի դուստր Բեսուլունն է, և բացառված չէ, որ նրա նվիրած Ձիթենեց այգին ևս Երևանում է. «...ես՝ Բեսուլունս, դուստր Մենասին Երեւանեցի, միաբան սրբոցս տվի զիմ Ձիթենեց այգին....»³⁴ (նկ. 10 բ): Այգու անունը, ըստ ամենայնի, ձիթհանի հետ է կապված:

Մյուս երկու վիմագրերում հիշատակված են երևանցիներ **Վահրամն ու Սարգիսը**, որոնք օժանդակել են եկեղեցու շինարարությանը: Վիմագրերից մեկը փորագրված է եկեղեցու հարավարևելյան ավանդատան մուտքի ճակատակալ քարին և վերաբերում է նույն ավանդատան (վիմագրում՝ մատուռ) շինարարությանը. «...ես՝ Վահրամ Երեւանցի, շինեցի զմի մատուռնս յիմ արդար վաստակոց....»³⁵: Վիմագրագետ **Գագիկ Սարգսյանը**, նկատի ունենալով անձնանվան, ժամանակի և նպաստավորման առարկայի նույնությունը, հավանական է համարում, որ այս և Գեղարդավանքի Ս. Աստվածածին եկեղեցու ձախ ավանդատան վիմագրում հիշատակված Վահրամը նույն անձն է³⁶:

31 Նույն տեղերում:

32 Տե՛ս **Հովսեփյան Գ.**, նշվ. աշխ., էջ 17, 25-26:

33 Նույն տեղում, էջ 30:

34 Նույն տեղում:

35 **Սարգսյան Գ.**, Վիմագրագիտական նորոյթներ (Հաւուց թառ), «Հանդէս ամսօրեայ», ՃԺԵ. տարի, Վիեննա-Երեւան, 2001, N 1-12, սիւն 234-235:

36 Տե՛ս նույն տեղում, սյուն 236:

Ծագումով երևանցի է նաև եկեղեցու արևմտյան պատի վիմագրերից մեկում հիշատակված Մեհևանի որդի Սարգիսը, որն առավազն 13-րդ դարասկզբին օժանդակել է եկեղեցու կառուցմանը. «...ես՝ Սարգիս Երեւանայ... յիմ արդար ստացուածոց ուժանդակ եղե ի շինութիւն եկեղեցոյս...»³⁷ (նկ. 11): Ակադեմիկոս **Բաբկեն Առաքելյանի** դիպուկ բնորոշմամբ՝ ունևոր երևանցիների՝ եկեղեցիների կառուցման կամ նորոգման աշխատանքներին աջակցելու երևույթն արդեն իսկ վկայում է այն, որ Երևանը քաղաք էր դարձել³⁸:

Վերոնշյալ վիմագրերի գոյությունը հուշում է նաև Հավուց թառ-Երևան կապերի վաղեմության մասին, որոնք պահպանվել են նաև հետագա դարերում, քանզի 17-րդ դարում հենց Հավուց թառում էր նստում Երևանի առաջնորդը, որը նաև տեղի վանահայրն էր³⁹:

2. ԳԵՂԱՐԴԱՎԱՆՔ

Երևանը քանիցս հիշատակված է նաև Գեղարդավանքի վիմագրերում: Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցու ձախ ավանդատան մուտքի վերևում պահպանված վեցտողանի վիմագրում կարդում ենք. «...ես՝ Ատոմ եւ ամուսին իմ Արքայ, միայբանեցաք Սբ. ուխտիս Այրիվանս եւ տվաք ընծայ զիմ տուն, որ Երեւան է...»⁴⁰: Ուշագրավ է, որ, ի տարբերություն նախորդ վիմագրերում հիշատակված այգիների, այստեղ ինչ-որ տուն է նվիրաբերվել: Վիմագրերում տների նվիրատվությունների երևույթին Անիում վկայված օրինակների հիման վրա անդրադարձել է պատմաբան **Գնել Գրիգորյանը**, որը, վկայակոչելով բյուզանդագետ **Հրաչ Բարթիկյանի** տեսակետը, այն է՝ վիմագրերում «տուն»-ը նշանակում է «արհեստանոց», իսկ «կուղպակ»-ը՝ «խանութ», վերապահորեն ընդունում և հավելում է, որ միշտ չէ, որ կրպակները՝ պարտադիր առևտրական, իսկ տներն արհեստագործական նշանակությամբ են հիշատակվում, քանի որ կրպակները հաճախ վկայված են Անիի արհեստագործական թաղամասերի վիմագրերում⁴¹:

Սակայն այնպես չէ, որ Գեղարդում Երևանից նվիրաբերվող այգու մասին հիշատակություն չկա. եկեղեցու արևելյան պատին՝ արտաքուստ պահպանված վիմագրերից մեկի համաձայն՝ ոմն Պետրոս իր արդար միջոցներով կառուցել է եկեղեցու ներքին խորաններից մեկը և նվիրաբերել Երևանում

37 Մաթևոսյան Կ., Հավուց թառի վանքը, Եր., 2012, էջ 50:

38 Տե՛ս Առաքելյան Բ., Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դարերում, հատ. 2, Եր., 1964, էջ 86:

39 Տե՛ս Մաթևոսյան Կ., նշվ. աշխ., էջ 60:

40 Գարեգին կրթ. Յովսեփեան, նշվ. աշխ., էջ 322-323, արժ. Ա./88: Ներկայումս վիմագիրն ամբողջությամբ ծածկված է ս. Թադեոս առաքյալի սրբապատկերով:

41 Տե՛ս Գրիգորյան Գ., Նվիրատվություններ Անիի եկեղեցիներին ու վանքերին (10-14-րդ դդ.), Ս. Եջմիածին, 2002, էջ 36, հմմտ. Սարգսյան Լ., Հայաստանի նվիրատվական արձանագրությունները 9-14-րդ դդ., Եր., 2007, էջ 64-65:

գտնվող իր դրամագին այգին. «...եւ ետու զիմ դրամագին այգին, որ յերեւան...»⁴² (նկ. 12):

1225 թվակիր մեկ այլ նվիրագիր է պահպանվել ժամատան հյուսիսարևելյան կրկնահարկ ավանդատան պատին, որում հիշատակված ծագումով Երևանից նվիրատուն (անունը եղծված է) իր միջոցներով կառուցել է եկեղեցու երկու խորանները և Երևանից այգի նվիրաբերել. «...եւ ետու զիմ այգին, որ յերեւան...»⁴³ (նկ. 13): Բոլոր նվիրատվություններն ավարտվում են պատարագների սահմանմանն ուղղված հայտնի ձևակերպումներով:

Է. ՀԱՂԱՐԾՆԻ ՎԱՆՔ

Հաղարծնի վանքի գլխավոր Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու արևմտյան պատին կից ավելի ուշ քառասյուն կենտրոնակազմ հորինվածքով գավիթ է կառուցվել, որի միակ՝ արևմտյան մուտքի ուղղանկյուն շրջանակն ու բարավորն արտաքուստ ամբողջությամբ ծածկված են վիմագրերով (նկ. 14): Գլխավոր արձանագրությունը փորագրված է բարավորի կիսաշրջան քարի վերնամասում, որում վկայված են **Ջաքարե և Իվանե եղբայրների** հաղթական պատերազմներն օտարների դեմ, թվարկված են ազատագրված բնակավայրերն ու ամրոցները՝ Ամբերդ (Անբերդ) դոյակը, թագավորանիստ Անին, Բջնին, Կարինը, Խլաթը, Շաքին, Շիրվանը, Պարտավը և այլն: Այնուհետև Իվանե Ջաքարյանն իր անունից գրում է, որ «ի դուռն» Հաղարծնի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու կառուցել է գավիթ՝ «վիմարդեն կամարակապ», և եղբոր հիշատակին, իբրև կալվածք, Երևանից նվիրաբերել մեկ այգի. «...Ա. (1) այգի յերեւանա էտու՝ վասն յիշատակի եղբար իմն...»⁴⁴:

Ը. ՈՒՇԻԻ Ս. ՍԱՐԳԻՍ ՎԱՆՔ

Ս. Մեսրոպ Մաշտոցի կողմից ս. Սարգսի նշխարներից Ուշի տեղափոխելու և այնտեղ վանք հիմնադրելու մասին ավանդությունից է սկսվում այս նշանավոր վանական համալիրի պատմությունը: Վանքը ծաղկում է ապրել 13-րդ դարում՝ պատմական Արագածոտն գավառում իշխող **Վաչուտյան** իշխանական տան ներկայացուցիչների օրոք: Վանքի գլխավոր Ս. Աստվածածին եկեղեցու կառուցման ստույգ թվականը թեպետ հայտնի չէ,

42 **Գարեգին կթ. Յովսէփեան**, նշվ. աշխ., էջ 320, արձ. Ա./72:

43 Նույն տեղում, էջ 326, արձ. Ա./105: Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան պատի վիմագրերից մեկը կազմվել է ոմն Դովի և Երևանի տանուտերերի ու պարոնների անունից, որոնք Դովի մահվան առթիվ գիր են հղել տեղի վանահորը, որն էլ քահանաների և եպիսկոպոսների մասնակցությամբ պատարագ է մատուցել: «Ա. (1) արծամ Դովին, Ա. (1) Վարդին, Ա. (1) Պատրկին» (նույն տեղում, էջ 319, արձ. Ա./63ա):

44 ԴՀԿ, պրակ VI, Իջևանի շրջան, կազմեցին՝ **Ավագյան Ս., Զանգիլայան Հռ.**, Եր., 1977, էջ 22-24, արձ. 23:

բայց որմերին պահպանված վիճակներից մեկը հուշում է, որ այն կառուցվել է առնվազն 13-րդ դարի առաջին տասնամյակներին: Հնագետ **Ֆրինա Բարայանի** ղեկավարությամբ 1999–2000 թթ. իրականացված պեղումների ընթացքում հայտնաբերվել են նաև վիճակներ, որոնցից մեկը՝ փորագրված 1827 թ. երկրաշարժից խոնարհված գլխավոր եկեղեցու հյուսիսային պատին՝ ներսի կողմում, վկայում է Ջաքարյաններից կողմնակալության իրավունքին արժանացած իշխանաց իշխան **Վաչե Վաչուտյանի** կողմից վանքի գլխավոր եկեղեցու բարեգարդման և Երևանում գտնվող Դապաղենց կոչվող իր դրամագին այգու նվիրաբերման մասին. «...գարդարեցի գար. նշխարքս արծաթով, արարի այլ արդիւնս յոլովս, էտու զիմ դրամագին այգին, որ յԵրեւան զԴապաղենց»⁴⁵ (նկ. 15): Նվիրատվության դիմաց վանքի միաբանությունը պատարագ է հաստատել Ծառգարդարի տոնին: **Դապաղենց** անունը, ըստ ամենայնի, այգու նախկին տերերի տոհմանունն է, որոնք կաշեգործներ էին⁴⁶:

Թ. ՀՈՎՀԱՆՆԱՎԱՆՔ

Հովհաննավանքի գավթի արևմտյան պատին՝ ներսի կողմում, պահպանվել է տեր **Հուսիկ Երևանցու** և նրա կնոջ՝ Սուրբան խանումի նվիրատվական վեցտողանի արձանագրությունը, համաձայն որի՝ վանքի Ս. Կարապետ եկեղեցուն է նվիրաբերվել իրենց «գանձագին հայրենիքը», այսինքն՝ սեփականությունը, որի դիմաց պատարագ է սահմանվել. «...ես՝ տէր Յուսիկ յէրէվանայ եւ ամուսին Սալթան խանումն, միայբանեցանք, տվինք մեր հալալ գանձայգին հայրենիքն ի դուռն Սբ. Կարապետիս...»⁴⁷ (նկ. 16): Կարծում ենք՝ Երևանից դարձյալ «գանձագին» այգին է նվիրաբերվել:

Հետաքրքիր է այս արձանագրության մասամբ փորագիր (առաջին երեք տողը), մասամբ ներկագիր լինելու հանգամանքը: Կարելի է ենթադրել, որ այս և սրա նման շատ վիճակներ նախքան փորագրումը ոչ միայն ուրվագծվել, այլև ներկագրվել են: Սույն վիճակին այդ երևույթի ցցուն վկայությունն է:

Ժ. ԱՆԻԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ

Բագրատունյաց Հայաստանի երբեմնի մայրաքաղաք Անիի բազմաթիվ եկեղեցիներից արվեստի տեսանկյունից ուշագրավը թերևս մեծահարուստ **Տիգրան Հոնենցի** մեկենասությամբ 1215 թ. կառուցված Ս. Գրիգոր Լուսա-

45 **Բարայան Ֆ., Բալանթարյան Ա.**, Ուշիկ Ս. Սարգիս վանքի վիճակն արձանագրությունները, «Պատմաբանասիրական հանդես», Եր., 2001, N 2, էջ 171, հմմտ. **Բարայան Ֆ.**, Ուշիկ Ս. Սարգիս վանքը, Եր., 2005, էջ 7-8:

46 Տես «Հայոց լեզվի բարբառային բառարան», հատ. 1, Եր., 2001, էջ 295:

47 **Ղաֆադարյան Կ.**, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, էջ 108, արձ. 60:

վորիչ եկեղեցին է: Մեզ հայտնի ծավալով ամենաընդարձակ և բովանդակությամբ հարուստ վիմագրերից մեկը հենց այս հուշարձանի հարավային պատին է՝ դրսի կողմում, որի՝ կիսասյուն կամարադեղներով հարդարված նիստերից երեքին տեղ է գտել Տիգրան Հոնենցի շինարարական-նվիրատվական արձանագրությունը՝ բաղկացած 25 տողից (նկ. 17):

Վիմագրի համաձայն՝ հայոց ՌԿԻ, այսինքն՝ 1215 թ.՝ Ջաքարիա ամիր-սպասալարի և նրա որդի Շահնշահի իշխանապետության օրոք, Հոնենց ազգից Սուլեմ Սմբատորենցի որդի Տիգրանը կառուցել է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին Ս. Աստվածածին կոչվող հին մատուռի տեղում: Այնուհետև պարսպապատել է ողջ տարածքն ու մի շարք կավածքներ նվիրաբերել՝ ոսկյա և արծաթյա զարդեր, խաչեր, ականակուռ և մարգարտաշար պատկերներ, կանթեղներ, Տերունական խաչի և սուրբ մարտիրոսների նշխարներ: Կառուցել է նաև վանականների և երթևեկող իշխանների համար սենյակներ, օժանդակ կառույցներ՝ եկեղեցում կարգելով նաև պատարագիչ քահանա: Նորահիմն վանքը շարունակել է հարստացնել նորանոր կավածքներով՝ իր միջոցներով գնված Գավռոխոնենց գյուղի կեսը, Քարհատի յոթ դանկը, հողեր, բաղնիս, միլ (ջրատար), կուղպակ, փնդուկ (հյուրատուն), մարագ, կալ, ախոռ, ձիթհան, ջաղաց, նաև «...այգի :Ա: (1)՝ յերեւան, այգի :Ա: (1)՝ յՈՂական, այգի :Ա: (1)՝ ի Կոշ, էգի :Ա: (1)՝ յԱրուձ, որ Մազոտն կոչի, այգի :Ա: (1)՝ ի Մրեն, այգի :Ա: (1)՝ ի Ծմակին, որ Կաթողիհող կոչի...»⁴⁸:

Վիմագիրը պարզում է միջնադարում Հայաստանի առավել այգեվետ բնակավայրերի անունները, որոնց շարքում, անխոս, իր պատկառելի տեղն ունի Երևանը: Ի հավելումն նշենք, որ հայտնի է նաև բավականին խոսուն այս արձանագրության գրչի՝ **Իսրայելի** անունը, որն իր ստորագրությունը թողել է վիմագրի վերջում «ԻՂ ԳՁ» հապավման տեսքով⁴⁹:

ԺԱ. ԵՐԵՎԱՆԻ ԿԱԹՈՂԻԿԵ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

Միջնադարյան Երևանը քանիցս հիշատակված է նաև տեղի՝ Երևանյան վիմագրերում: Քաղաքի կենտրոնում գտնվող Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցու որմերին պահպանվել են 13-14-րդ դդ. մեկ տասնյակից ավելի վիմագրեր, որոնց գիտական վերծանությունը կատարել է հնագետ-վիմագրագետ **Կարո Ղաֆադարյանը**⁵⁰:

48 ԴՀԿ, պրակ I, Անի քաղաք, կազմեց՝ **Օրբելի Հ.**, Եր., 1966, էջ 62-63, արձ. 188:

49 Հիմնականում Անիում գործած Իսրայել գրչին և նրա ստորագրությամբ հայտնի վիմագրերին համառոտ անդրադարձել է Սեդրակ Բարխուդարյանը (տես **Բարխուդարյան Ս.**, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Եր., 1963, էջ 200-201, N 15):

50 Տես **Ղաֆադարյան Կ.**, Երևան. միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, Եր., 1975, էջ 137-144, արձ. 1, 2, 4, 5, 7-12, էջ 156-157, արձ. 47, 55:

Կաթողիկե եկեղեցու հարավային պատին՝ արտաքուստ պահպանված արձանագրություններից մեկն առավել հայտնի է «Սահմադինի վիմագիր» անունով, քանի որ Անիի հարկահավաք պաշտոնյաներից պարոն Ավետիսի որդի **Սահմադինի** անունից է գրվել (նկ. 18): Այս վիմագրում է նշվում վերջինիս կողմից Երևանն իր հողով ու ջրով գնելու մասին. «...ես՝ Սահմատինս, պարոն Աետեսց որդիս, զԵրեւան գնեցի հողով եւ ջրով...»⁵¹: Անշուշտ, վիմագիրն առաջին հերթին վկայում է Երևանի՝ հողով ու ջրով, այսինքն՝ այգիներով նշանավոր լինելու մասին, որում համոզվեցինք նաև վերոնշյալ օրինակներով:

Եկեղեցու հյուսիսային պատի 1301 թվակիր վիմագիրը բնույթով նվիրատվական է, ըստ որի՝ Երևանի Կաթողիկեն ուն **Գեշմարդի** կողմից նվիրատվություններ է ստացել. «...:Բ: (2) կողպակն ներքնատներովն ու խղիրովն, եւ այլ բազում արդիւնք...»⁵² (նկ. 19): Կարո Ղաֆադարյանը, նվիրաբերված անշարժ գույքը նկատառելով, նշում է, որ 14-րդ դարասկզբին Երևանն ունեցել է քաղաքին հատուկ վաճառատներ, նկուղներ ու օժանդակ կառույցներ⁵³, իսկ Սեդրակ Բարխուդարյանը նույն Կաթողիկեի վիմագրերի հիման վրա եզրակացնում է, որ 13-րդ դարի կեսերից Երևանը դառնում է միջնադարյան տիպի քաղաք, վարչակրոնական կենտրոն՝ արհեստավորական և առևտրական ձեռնարկություններով⁵⁴:

Ուշագրավ է նաև հյուսիսային պատի 1318 թ. յոթտողանի վիմագիրը, որը դարձյալ իր բնույթով նվիրատվական է: Ուն **Գորգը** և նրա կին **Դովլաթը**, միաբանելով Երևանի ժամատեղիներին (նկատի ունի նախկինում համալիրի կազմում եղած կառույցները), Նորագավիթից Դիվական կոչվող հող են նվիրել և պատարագի արժանացել. «...միաբանեցաք Էրեւանու ժամատեղացս եւ տվաք ի Նորագավիթ գմեր հողն, որ ի Դիւականն է...»⁵⁵ (նկ. 20): Արձանագրության մեջ նշված է նաև նվիրաբերված հողի չափը, այն է՝ «:Ծ: (50) կապճի տեղ», որը, ըստ Կ. Ղաֆադարյանի, համապատասխանում է 50 կիլոգրամ ցորեն ցանելու հողատարածքին⁵⁶:

Ամփոփելուց առաջ հարկ ենք համարում նշել, որ միջնադարում երևանամերձ, իսկ ներկայումս քաղաքի արվարձաններ համարվող Նորքը, Ավանը, Քանաքեռը, Նորագավիթը ևս, ըստ գրավոր սկզբնաղբյուրների, այգեվետ, եկեղեցիներով հարուստ ու մարդաշատ բնակավայրեր են եղել: Այսպես, **Ավանի Կաթողիկե եկեղեցու** վիմագրերում երկիցս հիշատակված է տեղի այգիները շարիատից, այսինքն՝ տասանորդից ապահարկելու

51 Նույն տեղում, էջ 137, արձ. 1:

52 Նույն տեղում, էջ 138, արձ. 2:

53 Տե՛ս նույն տեղում, էջ 139, ծնթ. 3:

54 Տե՛ս **Բարխուդարյան Ա.**, Մի քանի դիտողություններ Երևանի Կաթողիկե եկեղեցու արձանագրությունների վերաբերյալ, «Տեղեկագիր» հաս. գիտ., Եր., 1947, N 5, էջ 69-70:

55 **Ղաֆադարյան Կ.**, Երևան. միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, էջ 140, արձ. 4:

56 Տե՛ս նույն տեղում:

մասին: Դրանցից մեկը գրվել է հայոց և վրաց Դեմետրե թագավորի գահակալության օրոք՝ 1285 թ., վերջինիս որդի Դավթի, իսկ մյուսը՝ 1287 թ. աթաբեկ և ամիրսպասալար Սադունի որդի Խուրթուբուղայի անունից⁵⁷: Ավելի ուշ, տեղի **Ս. Հովհաննես եկեղեցու** 1313 թ. մի նվիրագրի համաձայն, նվիրատուները՝ 600, իսկ վանքի միաբանները 750 սպիտակով, այսինքն՝ 1350 արծաթե դրամով, գնում են Սևրնձի (թերևս սևահող) կոչվող այգին, տներ ու նվիրաբերում եկեղեցուն⁵⁸, իսկ **Ձագավանքի՝** կիսով չափ պահպանված վիմագրերից մեկում նշվում է, որ Փիլիպոս եպիսկոպոսն ու Գրիգոր երեցը Ավանից այգի են գնել և նվիրատվություն արել. «Սբ. խաչս բարեխաչս է Փիլիպոս եպիսկոպոսին եւ Գրիգոր երեցին, որ գնեցանք յԱվան յիգին, [եւ] տվին...»⁵⁹: Այգու առուծախի մասին է հիշվում նաև Պետևանի և նրա կողակից Ավագտիկնոջ՝ **Քանաքեռի** իրենց հանգստարանում կանգնեցրած 1265/6 թվակիր հայտնի որմնափակ խաչքարի վիմագրերում: Ոմն Պարսիս և նրա ընտանիքի անդամներն իրենց սեփական այգին Պետևանին վաճառել են 4200 սպիտակով. «...ծախեցաք մեր սրտի յաւժարութեամբ զմեր հայրէնիք ա(յ)գիս Պետևանին :ԴԻԲԸ: (4200) սպ(իտակ) անպակաս առաք...»⁶⁰, ինչի առթիվ վկաների անվանական հիշատակմամբ վիմագիր «փաստաթուղթ» է կազմվել:

Նշենք, որ Երևանը բազմիցս վկայված է նաև ուշմիջնադարյան աղբյուրներում: Մատենագրական հարուստ սկզբնաղբյուրներից զատ՝ Երևանի 17-18-րդ դդ. պատմաշրջանն արտացոլված է նախ և առաջ տեղի եկեղեցիների վիմագրերում, որոնց հիման վրա լուսաբանվում են հատկապես 1679 թ. մեծ երկրաշարժից հետո քաղաքում իրականացված եկեղեցաշինությունն ու հոգևոր-մշակութային կյանքը: Սա, իհարկե, առանձին ուսումնասիրության թեմա է, որին կանդրադառնանք մեկ այլ առիթով, ուստի, չխորանալով մանրամասների մեջ, նշենք, որ այդօրինակ աղբյուրները պահպանված են Երևանի Կաթողիկե, Զորավոր Ս. Աստվածածին, երբեմնի Ս. Պողոս-Պետրոս (միայն Կ. Ղաֆաղարյանի և Ա. Քալանթարի վերծանություններն ու լուսանկարները), Կոնդի Ս. Հովհաննես Մկրտիչ, Նորագավիթի Ս. Գևորգ, Քանաքեռի Ս. Հակոբ, Ս. Աստվածածին և մյուս մեծ ու փոքր կառույցների ու կոթողների վիմագրերում:

Աներկբա, Երևանը միջնադարում նշանավոր այգեվետ գյուղաքաղաք, ապա քաղաք է եղել, սերտ կապեր ունեցել հատկապես Կեչառիսի, Հավուց թառի ու Գեղարդի վանական համալիրների հոգևոր առաջնորդության հետ, իսկ վերջիններս հողային տիրույթներ, նվիրատվությամբ ստացած

57 Տե՛ս նույն տեղում, էջ 195, արձ. 197-198:

58 Տե՛ս նույն տեղում, էջ 203, արձ. 215, հմմտ. **Ավագան Ս.**, նշվ. աշխ., էջ 303:

59 **Գասպարյան Ռ.**, Ձագավանքի համալիրը և նրա վիմագրերը, «Պատմաբանասիրական հանդես», Եր., 2007, N 1, էջ 208, արձ. 6:

60 **Ղաֆաղարյան Կ.**, Երևան. միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, էջ 208-209, արձ. 232:

կալվածքներ են ունեցել Երևանում: Այդ գործում պակաս կարևոր դեր չեն ունեցել նաև երևանցի մեծահարուստները, որոնք պատարագներում հիշվելու ակնկալիքով իրենց «դրամագին» ու «գանձագին» այգիները (կամ այլ նվերներ) նվիրաբերել են վանական միաբանություններին:

Համոզված ենք, որ միջնադարյան Երևանի հիշատակմամբ վիճաբերությունները միայն նշվածները չեն, և հետագա պրպտումներն ի հայտ են բերելու այսօրինակ առավել խոսուն վավերագրեր, որոնք, անշուշտ, համալրելու են ներկայացված շարքը:

Արսեն Է. Հարությունյան – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայկական վիճագրությունն ու ձեռագրագիտությունը: Ներկայումս զբաղվում է Արմավիրի մարզի և Տաթևի վանքի վիճագրական ժառանգության, ինչպես նաև միջնադարյան Երևանի գրչօջախների ուսումնասիրությամբ: Վեց գրքի և շուրջ յոթ տասնյակ գիտական հոդվածների հեղինակ է:

Էլեկտրոնային հասցե՝ ars.vimagraget@gmail.com

Summary

MEDIEVAL YEREVAN IN EPIGRAPHIC INSCRIPTIONS

Arsen E. Harutyunyan
Candidate of Sciences in History

Key words - Medieval Yerevan, epigraphic sources, borough, garden, gardening, monastery, church, donation, liturgy.

For studying the medieval history of Yerevan, in addition to the information transmitted in the writings of chroniclers, important original sources are also extant epigraphic inscriptions, which have been preserved for the most part on church walls, cross-stones (khachkars) and gravestones. Medieval Yerevan, which appears in the manuscript memorabilia mainly as a rural area, and since the 15th century as a city, was a populated territory rich in churches in which, among other things, manuscripts were copied.

The study of the epigraphic heritage of Yerevan was carried out by archaeologist, expert in epigraphy Karo Ghafadaryan, who presented 293 epigraphic inscriptions on the pages of his monograph published in 1975. Despite this circumstance, the history of

Yerevan by epigraphic evidence has never been the subject of special research. Undoubtedly, commemorative inscriptions are silent witnesses of the medieval history of the city, the construction and reconstruction of its churches, donations, spiritual and cultural life. Based on commemorative inscriptions, it can be stated that the churches of the settlements that were once close to Yerevan, and that have now entered the city plan (Nork, Avan, Noragavit, Kanaker, etc.), as well as the churches of the central part of Yerevan, almost in all medieval periods were active and played an important role. Despite the great destruction caused by the earthquake of 1679, at the end of the 17th century, church construction and cultural life in the city and its environs survived the time of its revival.

It should be noted that medieval Yerevan as a place rich in gardens is repeatedly mentioned especially in the dedicatory inscriptions of the 13th century preserved in the monasteries of Kecharis, Harich, Haghartsin, the Church of St. Gregory the Illuminator (Tigran Honentz) in Ani, Katoghike of Yerevan and on the walls of other monasteries and churches. The donors, hoping to receive the liturgy, donated a garden located in Yerevan or a part of the garden to a certain spiritual center, for which a memorial inscription was created. For example, in 1204, a certain Vardmbel acquired a quarter of the garden in Yerevan called Megitoni, and donated it to the Church of St. Gregory the Illuminator in Kecharis Monastery. In response to this, two liturgies were served in his honor. According to another commemorative inscription created during the construction of a lintel for the church of Surb Nshan (Holy Sign) of the same monastery, Paron (lord) Vard donated his own garden in Yerevan, called Chmshka, to the Church of St. Gregory the Illuminator in Kecharis, in response to which friar Petros appointed eight masses – four in honor of Vard and four in honor of Aniar.

СРЕДНЕВЕКОВЫЙ ЕРЕВАН В ЭПИГРАФИЧЕСКИХ НАДПИСЯХ

Арсен Э. Арутюнян

Канд. ист. наук

Ключевые слова - средневековый Ереван, эпиграфические источники, сельский город, сад, садоводство, монастырь, церковь, пожертвование, литургия.

Для изучения средневековой истории Еревана кроме сведений, переданных в сочинениях летописцев, важными первоисточниками являются также дошедшие до нас эпиграфические надписи, сохранившиеся большей частью на стенах церквей, хачкарах и надгробьях. Средневековый Ереван, фигурирующий в рукописных памятных записях в основном как сельская местность, а с XV века – город, был населенной местностью, богатой церквями, в которых, помимо прочего, копировались рукописи.

Изучением эпиграфического наследия Еревана занимался археолог, знаток эпиграфики Каро Кафадарян, представивший на страницах опубликованной им в 1975 году монографии 293 эпиграфические надписи. Несмотря на это обстоятельство, история Еревана по эпиграфическим свидетельствам никогда не становилась объектом специального исследования. Вне сомнения, памятные надписи являются немymi свидетелями средневековой истории города, строительства и реконструкции его церквей, пожертвований, духовной и культурной жизни. Основываясь на памятных надписях, можно констатировать, что церкви населенных пунктов, находящихся некогда поблизости от Еревана, а ныне вошедших в черту города (Норк, Аван, Норагавит, Канакер и пр.), так же как и церкви центральной части Еревана, почти во все этапы средневековья были действующими и играли важную роль. Несмотря на большие разрушения, причиненные землетрясением 1679 года, в конце XVII века церковное строительство и культурная жизнь в городе и его окрестностях переживали пору своего возрождения.

Необходимо отметить, что средневековый Ереван как богатая садами местность не раз упоминается в особенности в посвятительных надписях XIII века, сохранившихся в монастырях Кечарис, Арич, Агарцин, церкви Св. Григория Просветителя (Тиграна Оненца) в Ани, церкви Катогике Еревана и на стенах других монастырей и церквей. Дарители, надеясь удостоиться литургии, предоставляли в дар находящийся в Ереване сад или часть сада определенному духовному центру, о чем составлялась памятная надпись. Так, например, некий

Вардмбел в 1204 году приобрел четверть находящегося в Ереване сада, называемого Мегитони, и передал его в дар церкви Св. Григория Просветителя в монастыре Кечарис. В ответ на это было отслужено две литургии в его честь. Согласно другой памятной надписи, сделанной в период сооружения притолоки церкви Сурб Ншан (Св. Знамения) того же монастыря, господин Вард пожертвовал свой собственный сад в Ереване, называемый Чмшка, церкви Св. Григория Просветителя в Кечарисе, в ответ на что отец Петрос назначил восемь обеден – четыре в честь Варда и четыре в честь Аниар.

REFERENCES

1. “Hayots‘ lezvi barbarayin bararan”, hat. 1, Yer., 2001 (**In Armenian**).
2. “Hayots‘ lezvi barbarayin bararan”, hat. 4, Yer., 2007 (**In Armenian**).
3. **Aṙak‘elyan B.**, K‘aghak‘nerē yev arhestnerē Hayastanum IX-XIII darerum, hat. 2, Yer., 1964 (**In Armenian**).
4. **Arutjunjan N.**, Korpus uratskix klinoobraznyx nadpisej, Jer., 2001 (**In Russian**).
5. **Avagyan S.**, Vimakan ardanagrut‘yunneri barak‘nnut‘yun, Yer., 1978 (**In Armenian**).
6. **Babayan F., K‘alant‘aryan A., Ushii S.** Sargis vank‘i vimakan ardanagrut‘yunnerē, “Patmabanasirakan handes”, Yer., 2001, N 2, ēj 169-199 (**In Armenian**).
7. **Babayan F., Ushii S.** Sargis vank‘ē, Yer., 2005 (**In Armenian**).
8. **Barkhudaryan S.**, Mi k‘ani ditoghut‘yunner Yerevani Kat‘oghike yekeghets‘u ardanagrut‘yunneri veraberyal, “Teghekagir” has. git., Yer., 1947, N 5, ēj 69-78 (**In Armenian**).
9. **Barkhudaryan S.**, Mijnadaryan hay chartarapetner yev k‘argorts varpetner, Yer., 1963 (**In Armenian**).
10. **Bdoyan V.**, Yerkragortsakan mshakuyt‘ē Hayastanum, Yer., 1972 (**In Armenian**).
11. **Beglaryan H.**, Aygegortsut‘yunē mijnadaryan Hayastanum, “Lraber” has. git., Yer., 1989, N 11, ēj 71-79 (**In Armenian**).
12. DHV (Divan hay vimagrut‘yan), prak I, Ani k‘aghak‘, kazmets‘ **Örbeli H.**, Yer., 1966 (**In Armenian**).
13. DHV (Divan hay vimagrut‘yan), prak IV, Geghark‘unik‘. Kamoyi, Martunu yev Vardenisi shrjanner, kazmets‘ **S. Barkhudaryan**, Yer., 1973 (**In Armenian**).
14. DHV (Divan hay vimagrut‘yan), prak VI, Ijevani shrjan, kazmets‘in` **Avagyan S., Janp‘oladyan Hr.**, Yer., 1977 (**In Armenian**).
15. DHV (Divan hay vimagrut‘yan), prak X, Shiraki marz, kazmets‘ **S. Barkhudaryan**, Yer., 2017 (**In Armenian**).
16. **Gasparyan R.**, Dzagavank‘i hamalirē yev nra vimagrērē, “Patmabanasirakan handes”, Yer., 2007, N 1, ēj 198-217 (**In Armenian**).
17. **Ghafadaryan K.**, Hayeren gri skzbnakan tesaknerē, “Ējer hayots‘ mijnadaryan mshakuyt‘i yev patmut‘yan”, Gitakan zhaṙangut‘yun, hat. 5, Yer., 2007, ēj 123-188 (**In Armenian**).
18. **Ghafadaryan K.**, Hovhannavank‘ē yev nra ardanagrut‘yunnerē, Yer., 1948 (**In Armenian**).
19. **Ghafadaryan K.**, Yerevan. mijnadaryan hushardzannerē yev vimakan ardanagrut‘yunnerē, Yer., 1975 (**In Armenian**).
20. **Grigoryan G.**, Nviratvut‘yunner Anii yekeghets‘inerin u vank‘erin (10-14-rd dd.), S. Ējmiatsin, 2002 (**In Armenian**).

21. **Hakobyan T.**, Yerevani patmut'yuně. hnaguyn zhamanaknerits' minch'ev 1500 t., Yer., 1969 **(In Armenian)**.
22. **Harut'yunyan A.**, Mijnadaryan Yerevaně vimakan ardzanagrut'yunnerum, "Shiraki patmamshakut'ayin zharangut'yuně. Hayagitut'yan ardi himnaharts'er" 10-rd mijazgayin gitazhoghovi nyut'er, Gyumri, 27-29 septemberi 2019, ėj 41-43 **(In Armenian)**.
23. **Harut'yunyan A.**, Vagharshapat. vank'erě yev vimakan ardzanagrut'yunnerě, S. Ėjmiatsin, 2016 **(In Armenian)**.
24. **Harut'yunyan N.**, Yerevani himnadman harts'i shurj, "Patmabanasirakan handes", Yer., 1959, N 2-3, ėj 78-96 **(In Armenian)**.
25. **Hovsep'yan G.**, Havuts' t'ari Amenap'rkich'ě yev nuynanun hushardzanner hay arvesti mej, "Nyut'er yev usumnasirut'yunner hay arvesti patmut'yan", hat. B, Yer., 1987, ėj 5-107 **(In Armenian)**.
26. **Israyelyan M.**, Urartakan yerku nor ardzanagrut'yun, "Teghekgagir" has. git., Yer., 1951, N 8, ėj 89-99 **(In Armenian)**.
27. **Mat'evosyan K.**, Havuts' t'ari vank'ě, Yer., 2012 **(In Armenian)**.
28. **Melikishvili G.**, Drevnevostochnyje materialy po istorii Zakavkaz'ja, I, Nairi-Urartu, Tbilisi, 1954 **(In Russian)**.
29. **Melik'set'-Bek L.**, Patmabanasirakan prptumner, ashkhatsirut'yamb` P. Muradyani, S. Ėjmiatsin, 2010 **(In Armenian)**.
30. **Melik'set'-Bek L.**, Yerevani hishatakut'yuně Sevani 874 t. ardzanagrut'yan mej, SSRM GA Teghekgagir, 1940, N 4-5, ėj 117-118 **(In Armenian)**.
31. **Melikset-Bekov L.**, Novootkrytaja nadpis' na Sevane ot 874 g., "Pamjati akademika N. Ja. Marra", M.-L., 1938, ss. 409-415 **(In Russian)**.
32. **Mkhit'aray Ayrivanets'woy** Patmut'iwn Hayots', I loys ėntsayeats' **M. Ėmin**, Moskva, 1860 **(In Armenian)**.
33. **Oganesjan K.**, Arin-berd (Ganli-tapa) – urartskaja krepost' goroda Irpuni, "Teghekgagir" has. git., Yer., 1951, N 8, ss. 75-88 **(In Russian)**.
34. **Sargsean G.**, Vimagragitakan noroyt'ner (Hawuts' t'ar), "Handēs amsōreay", CHZHYE. tari, Vienna-Yerevan, 2001, N 1-12, ėj 229-256 **(In Armenian)**.
35. **Sargsyan G.**, Grigor-Apirat Hasanyan. Himnadir Kech'arisi vank'i (vimagrakan nor vkayut'yun), "Hin Hayastani mshakuyt'ě", XII, hanrapetakan gitakan nstashrjan` nvirvats akad. Babken Aṙak'elyani tsnnryan 90-amyakin, Yer., 2002, ėj 107-112 **(In Armenian)**.
36. **Sargsyan L.**, Hayastani nviratvakan ardzanagrut'yunnerě 9-14-rd dd., Yer., 2007 **(In Armenian)**.
37. **Yovhannēs yeps. Shahkhat'uneants'**, Storagrut'iwn Kat'ughikē Ėjmiatsni yew hing gawaṙats'n Araratay, ashkhatsirut'yamb` **A. Ter-Step'anyani**, S. Ėjmiatsin, 2014 **(In Armenian)**.
38. **Simēon kat'oghikos Yerewants'i**, Jambṙ, Vagharshapat, 1873 **(In Armenian)**.
39. **Step'anos Őrbēlean**, Patmut'iwn nahangin Sisakan, T'iflis, 1910 **(In Armenian)**.
40. **Vardanyan S.**, Hayastani mayrak'aghak'nerě, Yer., 1995 **(In Armenian)**.
41. **Yovhannu kat'oghikosi Draskhanakertts'woy** Patmut'iwn Hayots', k'nnakan bnagirě yev aṙajabaně **G. Tēr-Vardaneani**, "Matenagirk' Hayots'", ZHA. hator, ZH. dar, Ant'ili-as-Libanan, 2010, ėj 315-628 **(In Armenian)**.
42. **Yovsēp'ean G.**, Khaghbakeank' kam Pṙosheank' Hayots' patmut'ean mēj, B. hratarakut'iwn, Ant'ili-as-Libanan, 1969 **(In Armenian)**.



Նկ. 1. Երեբունի-Երևանի սեպագիր «անձնագիրը», ք. ա. 782 թ.



Նկ. 2. Սևանավանքի 874 թ. արձանագրությունը (լսնկ.՝ Գագիկ Սարգսյանի)



Նկ. 3. Մաքենյաց վանքի Ս. Աստվածածին եկեղեցու արևելյան պատի շարվածքում օգտագործված 9-10-րդ դդ. վիմագրակիր քարերը (լսնկ.՝ Սողոմոն Մաթևոսյանի)




Նկ. 4. Հատված Հառիճավանքի 1201 թ. արձանագրությունից



Նկ. 5. Հառիճավանքի գավթի 1224 թ. արձանագրությունը




Նկ. 6. Կեչառիսի վանքի Ս. Նշան եկեղեցու 1204 թ. արձանագրությունը



Նկ. 7. Հատվածներ Կեչառիսի վանքի Կաթողիկե եկեղեցու 1214 թ. արձանագրությունից



Նկ. 8. Վարդ պատրոնի արձանագրությունը Ս. Նշան եկեղեցու մուտքի բարավորին, 13-րդ դ.



Նկ. 9. Մխիթարիչի սկիրագիրը Ս. Նշան եկեղեցու արևմտյան պատին, 13-րդ դ.




Նկ. 10ա,բ. Հավուց թառի վանքի 13-րդ դարի վիմագրերից



Նկ. 11. Սարգիս Երևանցու արձանագրությունը Հավուց թառի վանքում, 13-րդ դ.



Նկ. 12. Գեղարդավանքի սկիրատվական վիմագրերից, 13-րդ դ.



Նկ. 13. Գեղարդավանքի գավթի 1225 թ. արձանագրությունը



Նկ. 14. Հատված Հաղարծնի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն կից կառուցված գավթի շքամուտքի վիմագրից (լսնկ.՝ Սողոմոն Մաթևոսյանի)



Նկ. 15. Վաչե Վաչուտյանի արձանագրությունը Ուշիում, 13-րդ դ.




Նկ. 16. Հուսիկ Երևանցու արձանագրությունը Հոփհանսևազանցում, 13-րդ դ.




Նկ. 17. Հատված Անիի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու արձանագրությունից, 1215թ.



Նկ. 18. Երևանի Կաթողիկե եկեղեցու 1264 թ. արձանագրությունը (լսնկ. Հրայր Բագե Խաչերյանի)



Նկ. 19. Երևանի Կաթողիկե եկեղեցու 1301 թ. արձանագրությունը



Նկ. 20. Երևանի Կաթողիկե եկեղեցու 1318 թ. արձանագրությունը